

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ
Զադոյան Ա. Մ.**

Հոդվածում ներկայացվում են ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացում առկա հիմնախնդիրները: Դիտարկվում են նաև մանկավարժական խորհրդատվության իրականացման ձևերը, եղանակները և մեթոդները: Հոդվածի նպատակն է՝ ընդգծել մանկավարժական խորհրդատվության մեթոդական նշանակությունը կրթական գործընթացի տարբեր սուբյեկտների գործունեության արդյունավետ իրականացման ընթացքում՝ համընդհանուր ներառականության պայմաններում:

Բանալի բառեր. ներառական կրթություն, ԿԱՊԿՈՒ երեխաներ, «Սոցիալական» մոդել, թրեյնինգ, «պարզաբանող հետազոտության», «նմուշաիրավիճակային», «կիզակետ-վերլուծության» մեթոդներ:

2005թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Ներառական կրթությունը (ֆրանս. Inklusif-ներփակված, լատ.include-ներառված) կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը՝ հիմնված հաշմանդամության «Սոցիալական» մոդելի վրա: Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Կարևորելով համընդհանուր ներառական կրթական քաղաքականության իրականացման նշանակությունը, այնուամենայնիվ, պետք է համաձայնել այն իրողության հետ, որ այդ գործընթացում

ձևավորվում են տարաբնույթ հակասություններ, խնդրահարույց իրավիճակներ, լուծում պահանջող խնդիրներ: Համաձայնելով Լ. Թ. Ասատրյանի դիտարկմանը, ըստ որի՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հակասությունների ներկայությունը համարվում է հիմնախնդրի առկայության չափանիշ [1, էջ 28], նկատենք, որ հիմնախնդիրների լուծումը սկսվում է իրավիճակի գնահատմամբ:

Սույն հոդվածի նպատակն է դիտարկել այն խնդրահարույց իրավիճակները, որոնք գոյանում են ԿԱՊԿՈւ երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներում և փորձել բացահայտել դրանց հաղթահարման ուղիները: Երբ խոսքը գնում է հակասությունների մասին, պետք է համաձայնել, որ հնարավոր չէ պատկերացնել սոցիալական կեցության որևէ ոլորտ առանց հակասությունների: Մանկավարժական գործունեությունը, հանդես գալով որպես սոցիալական կեցության ոլորտ, հասարակական գիտակցության յուրահատուկ ձև, նույնպես զերծ չէ այդ հակասություններից, ավելին՝ այդ հակասությունների ձևավորման արդյունքում է կատարվում ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացումը և առաջընթացը: Կրթադաստիարակչական աշխատանքներում արտահայտվող հակասությունների մի մասը պայմանավորված է մանկավարժների գործունեությանը ներկայացվող նոր պահանջների և դրանց իրականացման համար ոչ բավարար ձևավորված մեթոդական համակարգի, մյուսները՝ դաստիարակչական խնդիրների լուծման մեջ ծնողական և մանկավարժական դիրքորոշումների, հաջորդները՝ մանկավարժական հանրույթների մասնագիտական զարգացման անհրաժեշտության և կադրերի որակավորման բարձրացման համակարգի ռազմավարության անհամապատասխանությամբ:

Դիտարկելով ԿԱՊԿՈւ երեխաների կրթական գործընթացում ձևավորված դժվարությունները՝ պայմանականորեն դասակարգենք դրանք ըստ կրթական գործընթացի սուբյեկտների՝ ա) մանկավարժների, բ) սովորողների և գ) ծնողների գործունեության դժվարությունների: Պետք է նկատենք, որ մանկավարժների մասնագիտական գործունեության մեջ առկա դժվարություններից մի քանիսի առաջացումը պայմանավորված է մանկավարժների կողմից սովորողների վարքի կառավարման անկարողությամբ, մյուսները՝ իրավիճակների նկատմամբ կարծրատիպային վերաբերմունքով: Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է կոտրել մանկավարժների այդ կարծրատիպերը և ձևավորել նոր մանկավարժական մտածողություն,

որն ամրապնդելու է հոգևոր, ինտելեկտուալ ուժերը՝ դրանք ուղղորդելով ներկա պայմաններին համապատասխան գնահատականների ձևավորման, արդյունավետ մանկավարժական գործողությունների, նոր մեթոդների որոնման կողմը [2, էջ 28]: Սովորողների գործունեության դժվարությունները ներկայացնելով՝ պետք է նկատենք, որ դրանք հիմնականում պայմանավորված են ԿԱՊԿՈւ երեխաների կրթական գործընթացում ինտեգրման համար անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական հարմարվողականության թույլ կարողություններով:

Անդրադառնալով ծնողական կողմի դժվարություններին՝ պետք է նշենք, որ որոշ դեպքերում, երբ երեխայի մոտ հայտնաբերվում է զարգացման խանգարումներ, ծնողները հրաժարվում են ընդունել այդ փաստը կամ շատ դժվարությամբ են համակերպվում դրա հետ: Նման պարագայում նրանք իսկապես օգնության կարիք ունեն: Հավելենք, որ կարևոր նշանակություն ունի նաև ԿԱՊԿՈւ երեխաների գնահատման համակարգի աշխատանքի արդյունավետությունը: Փորձը ցույց է տալիս, որ երբեմն ԿԱՊԿՈւ գնահատական է տրվում սոցիալապես անապահով կամ չառաջադիմող աշակերտներին, ուստի պետք հստակ սահմանել ԿԱՊԿՈւ գնահատման չափորոշիչները:

Նշված դիտարկումները թույլ են տալիս ասելու, որ ԿԱՊԿՈւ երեխաների առկայությունը տարաբնույթ դժվարություններ է ստեղծում դպրոցի տարբեր ենթակառուցվածքներում: Մեր համոզմամբ՝ նման պայմաններում ուսումնամեթոդական աջակցություն կարող է համարվել մանկավարժական գիտելիքի մի նոր ոլորտ՝ «Մանկավարժական խորհրդատվությունը» /ՄԽ/, որը ենթադրաբար դառնալու է միջնորդ օղակ մանկավարժների, ծնողների, սովորողների և ԿԱՊԿՈւ երեխաների միջև՝ ապահովելով նրանց համագործակցային աշխատանքը, նպաստելու ԿԱՊԿՈւ երեխաների կրթական միջավայր ինտեգրմանը: ՄԽ-ն մասնագիտական գրականության մեջ դիտարկվում է որպես խորհրդատուի և խորհրդառուի միջև որոշակի ձևով կազմակերպված համագործակցություն՝ միտված լուծելու խորհրդառուի գործունեության ընթացքում առաջացած խնդիրները և ձևավորելու դրական փոփոխություններ [3, էջ 9]:

ՄԽ-ն ընդգրկում է մի շարք հիմնահարցերի ուսումնասիրություն, որոնցից մեր հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք կրթական գործընթացի տարբեր սուբյեկտներին՝ մանկավարժներին, ծնողներին, մանկավարժի օգնականներին խորհրդատվական օգնության ցուցաբերմանը: Մանկավարժների հետ տարվող ՄԽ-ն կատարվելու է

խմբային և անհատական եղանակով: Խմբային եղանակը իրականացվելու է քննարկումների, բանավեճերի, թրեյնինգների ձևով, որոնց ժամանակ մանկավարժները ներկայացնելու են իրենց մասնագիտական գործունեության խնդրահարույց իրավիճակները: Նշված իրավիճակների խմբային քննարկումը նպաստելու է նրանց մոտ նոր մտածողության և մանկավարժական պահվածքի ձևավորմանը: Անհատական խորհրդատվությունը կարելի է իրականացնել պարզաբանող հետազոտության, նմուշաիրավիճակային և կիզակետ-վերլուծության մեթոդներով: Առաջին մեթոդը նպատակ ունի բացահայտել մանկավարժների մասնագիտական դժվարության ձևավորման պատճառները, բնույթը և դրանցից բխող հետևանքները: Այն ենթադրում է մանկավարժական գործընթացում ձևավորված խնդրահարույց իրավիճակների մասնատումը և դրանց վերլուծությունը: Նմուշաիրավիճակային մեթոդի կիրառման դեպքում մանկավարժի կողմից ներկայացվում է խնդրահարույց իրավիճակը, որի դեպքում խորհրդատուն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, թե ինչպես է նա վերապրում իր պրոբլեմը: Վերջինս կարևորվում է խորհրդատուի կողմից, քանի որ յուրաքանչյուր անհատի բնորոշ է իր աշխատանքային համակարգը, խառնվածքի տեսակը, արժեքային կողմնորոշումները, որոնց միջոցով ձևավորվում է նրա պահվածքը: Ծանոթանալով դրանց՝ խորհրդատուն կարող է խորհրդատուին առաջարկել նշված իրավիճակի պարզաբանման մեկ այլ տեսակետ, որի միջոցով ընդլայնվելու է մանկավարժի փորձառության դաշտը: Կիզակետ-վերլուծական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել մանկավարժի անձի բազմակողմանի վերլուծություն: Այս դեպքում խորհրդատուի հիմնական խնդիրն է քննարկել խնդրահարույց իրավիճակը ձևավորող բոլոր պայմանները: Վերջինը իր հերթին ենթադրում է նշված իրավիճակի տարբեր տարրերի (օր.՝ խորհրդատուի անձնային և մասնագիտական առանձնահատկությունները) համակողմանի վերլուծություն: Որպես խորհրդատուի ուսումնասիրության օբյեկտ՝ կարող է հանդես գալ խորհրդատուի մասնագիտական դժվարությունը, ձևավորման պատճառները, հետևանքները:

Նկատենք, որ արդեն գործող մանկավարժի օգնականները իրենց մասնագիտական գործունեությունը ավելի լիարժեք կիրականացնեն, եթե անցնեն որոշակի ուսուցողական դասընթացներ, ծանոթանան ՄԽ-ի սկզբունքներին, առանձնահատկություններին, գործառույթներին, իրականացման ձևերին, եղանակներին, մեթոդներին: Նշված

դասընթացները կանցկացնեն բարձրագույն դպրոցի դասախոսները, կրթության ղեկավարման օրգանների ներկայացուցիչները, մեթոդիստները, որոնք հանդես կգան մանկավարժ-խորհրդատուի դերում:

Որպես ամփոփում՝ նշենք, որ ՄԽ-ի արդյունքում ենթադրվում է, որ դպրոցի մանկավարժական հանրույթի կորպորատիվ մշակույթում կատարվելու են էական փոփոխություններ: Դպրոցի հանրույթն իր աշխատանքում որդեգրելու է երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է բարձր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են, մասնավորապես՝ կրթադաստիարակաչական գործընթացին բոլոր երեխաների մասնակցությունը, համագործակցությունը և հավասարությունը: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Հավելենք նաև, որ ՄԽ-ն ենթադրում է սովորողների հոգևոր ուժերի, հարմարվողական կարողությունների, բարոյականային որակների զարգացում, իմացական հետաքրքրությունների բացահայտում, միաժամանակ դժվարությունների ու արգելքների հաղթահարման ունակության ձևավորում:

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ФУНКЦИИ ПЕДАГОГИЧЕСКОГО
КОНСУЛЬТИРОВАНИЯ ПО ПРЕОДОЛЕНИЮ СУЩЕСТВУЮЩИХ
ПРОБЛЕМ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ ДЕТЕЙ С ОСОБЫМИ
ОБРАЗОВАТЕЛЬНЫМИ ПОТРЕБНОСТЯМИ**

Задоян А. М.

В статье представлены существующие проблемы в образовательном процессе детей, нуждающихся в особых условиях обучения. Также рассматриваются виды, способы, методы педагогического консультирования. Цель данной статьи - подчеркнуть методологическую значимость педагогического консультирования в контексте всеобщего инклюзивного образования в эффективной реализации деятельности различных субъектов образовательного процесса.

Ключевые слова: инклюзивное образование, дети с особыми образовательными потребностями, «социальная» модель, тренинг, «объяснительное исследование», методы - «образец ситуационный», «фокус-анализ».

METHODOLOGICAL ACTIVITIES OF PEDAGOGICAL CONSULTATION
ON OVERCOMING EXISTING PROBLEMS IN THE EDUCATIONAL
PROCESS OF CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS

Zadoyan A. M.

The article presents the existing problems in the educational process of children in need of special learning conditions. The types, methods of pedagogical counseling are also considered. The purpose of this paper is to emphasize the methodological significance of pedagogical counseling in the context of universal inclusion in the effective implementation of the activities of various subjects of the educational process.

Keywords: inclusive education, children with special educational needs, “Social” model, training, “explanatory research”, “sample situational”, “focus analysis” methods.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ. Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: «Արտագերս»: 2011: 178 էջ:
2. Զաղոյան Ա. Մ. Մանկավարժական խորհրդատվության դերը ուսուցչի մանկավարժական մշակույթի ձևավորման գործում:// Մանկավարժական միտք: 2012: 1-2, թիվ 40-41: էջ 27-33:
3. Певзнер М. Н., Зайченко О. М., Горычева С. Н., Аверкин В. Н., Ширин А. Г., Петров А. В. Педагогическое консультирование /Под ред. В. А. Слостенина и И. А. Колесниковой. Учебное пособие М.: Изд. “Академия”. 2006. 319 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Զաղոյան Ա. Մ. – մանկավարժական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ anahit28-65@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 07.09.2021
Գրախոսվել է՝ 02.12.2021